ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանի ողջույնի խոսքը ՀՀ պաշտպանության նախարար Սեյրան Օհանյանի՝ ՀՊՏՀ այցի առիթով

Հայաստանի Հանրապետության պաշտպանության հարգարժան նախարար Սեյրան Օհանյան, նախարարի աշխատակազմի հարգարժան ներկայացուցիչներ, հյուրեր, գործընկերներ, ուսանողներ:

Անխախտ ավանդույթ է դարձել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի ու բարձրաստիճան զինվորականների այցելությունը Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան: Ամեն այդպիսի առիթը մեր ուսումնական հաստատությունը հիրավի համակում է հայրենասիրության ու մարտունակության ոգով, հնարավորություն տալիս մտքեր փոխանակել և ստանալ բազմաթիվ հարցերի ստույգ պատասխաններ:

Հարգարժան նախարար, հյուրեր, երիտասարդության ռազմահայրենասիրական դաստիարակությունը մեր գործունեության ուղենիշն է, այդ գործում իր մեծ ներդրումն ունի նաև մեր համալսարանի ուսանողական խորհուրդը և, ինչպես գիտեք, բազմաթիվ միջոցառումներով՝ այցերով զորամասեր ու շնորհանդեսներով, հերոսների անվան լսարանների բացումով ու նոր հրատարակություններով, ցերեկույթներով ու հանդիպումներով արտահայտում է իր նվիրվածությունն ու անձնվեր մասնակցությունն այդ գործին:

Այսօրվա իրադարձությունը ասվածի վկայությունն է. ՀՊՏՀ-ում նորաբաց հրաձգարանը ուսանող-բանակ կապի ամրապնդման մի նոր օղակ կհանդիսանա, և ՀՊՏՀ ֆիզդաստիարակություն, արտակարգ իրավիճակների ու քաղպաշտպանության ամբիոնն իր ավանդը կունենա մեր երիտասարդությանը նաև այս հմտությամբ օժտելու գործում:

Հարգելի նախարար, Ձեր ներկայությունն այսօր մեր համալսարանում և ուսանողության հետ երկխոսելու Ձեր պատրաստակամությունն անչափ կարևոր է: Անվեհեր հայրենասերի, անբասիր պետական գործչի Ձեր կերպարը մեզ համակում է հպարտությամբ ու լավատեսությամբ և օրինակ ծառայում երիտասարդ սերնդի համար: Մեր երիտասարդությանն անհրաժեշտ են հերոսների կերպարներ, խիզախության օրինակներ, և յուրաքանչյուր հաղորդակցումը Ձեզ հետ նրանց համար դառնում է ռազմահայրենասիրության մի նոր դաս:

Հատկապես վերջին օրերին սահմանամերձ շրջանների լարվածությունը զգոնության ու զգաստության ահազանգ է բոլորիս, մարտակոչ առ այն, որ յուրաքանչյուրս պետք է պատրաստ լինի դառնալու հայրենիքի սահմանապահը, նրա խաղաղության պահապանը: Այսօր մեր երկրի պաշպանությանը զինվորագրված են նաև մեր համալսարանի շատ ու շատ ուսանողներ: Ամեն անգամ ՀՀ զինված ուժերից հերթական շնորհակալական նամակը ստանալիս ես հպարտությամբ ու

հիացմունքով եմ լցվում՝ տեղեկանալով որ մեր ուսանողը պատվով է կատարում իր սրբազան պարտքը, օրինակելի է ու բարեխիղճ:

ՀՀ անկախության 24-րդ տարեդարձին ընդառաջ՝ շնորհավորում եմ բոլորիս տոնը: Կարծում եմ՝ սեպտեմբերյան տոները՝ Գիտելիքի տոն, Հայաստանի և Արցախի հանրապետությունների անկախության տոներ, մի միասնացած խորհուրդ ունեն իրենց մեջ: Դրանք արտահայտում են գիտելիքով ու կրթությամբ հարստացած անհատների կողմից զարգացած, կայուն ու անկախ պետականություն կերտելու գաղափարը: Եվ հետևաբար այս տոները նշելով մենք կրկին ու վերստին կարևորում ենք այդ արժեքները, մեզ վերապահում դրանց կրողը լինելու բարձր պատիվը:

Մեր երկրի անկախությանը մենք վերաբերվում ենք պատասխանատվությամբ և քաջ գիտենք նրա ձեռք բերման ու կորստի գինը, գիտենք նաև, թե որքան կամք ու կորով, պետականաշինության բարձ գիտակցություն է պետք ունենալ այն պահպանելու ու զարգացնելու համար: Հետևաբար բարձրագույն ուսումնական հաստատությունն իր ամբողջ ներուժով պետք է մասնակից դառնա հայոց անկախ պետության զարգացման գործին՝ կրթելով ու մեծ կյանք ճանապարհելով գրագետ, ազնիվ, հայրենասեր, ազգային արժանապատվությամբ օժտված սերունդ:

Կրկին ողջունում եմ բոլորիդ մեր համալսարանի կամարների ներքո՝ համոզված լինելով, որ մեր հանդիպումն ինչպես միշտ սնելու է մարդկային ամենավսեմ զգացումը՝ հայրենիքի հանդեպ սերը: